Մի շարք սննդային հավելումների մանրածախ վաճառքին ներկայացվող պահանջները և ցանկը հաստատելու մասին

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ _____ 2023 թվականի N _____-Ն

ՄԻ ՇԱՐՔ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում մի շարք սննդային հավելումների մանրածախ վաճառքին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել մանրածախ վաճառքի համար նախատեսված մի շարք սննդային հավելումների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Հավելված N 1

ՀՀ կառավարության թվականի

-ի N - Ն որոշման

ՄԻ ՇԱՐՔ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Մանրածախ վաճառքի համար նախատեսված մի շարք սննդային հավելումները պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին» N 58 որոշմանը, Մաքսային միության տեխնիկական այլ կանոնակարգերի, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա, ինչպես նաև սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

2. Մի շարք սննդային հավելումների մանրածախ վաճառքի դեպքում պիտակի վրա պետք է նշվի՝

1) սննդային հավելման անվանումը,

2) սննդային հավելման ծագման երկիրը (եթե սննդային հավելումը վերամշակվում է երկրորդ երկրում, որտեղ փոխվել է դրա քիմիական կամ ֆիզիկական բնույթը, մակնշման նպատակներով ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ իրականացվել է վերամշակումը),

3) պահպանման ժամկետը,

4) տեսանելի տեղում զետեղվում է «սննդի մեջ օգտագործելու համար» բառերը,

5) բավարար տեղեկատվություն այն մասին, թե ինչպես պետք է սննդային հավելումը պահվի և օգտագործվի սննդի մեջ,

6) մանրածախ վաճառքի համար նախատեսված մի շարք սննդային հավելումների փաթեթավորման (պիտակների) վրա անհրաժեշտ է նշել օգտագործման վերաբերյալ համառոտ հրահանգ (օգտագործման եղանակ, չափաբաժիններ և ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա):

7) պարունակությունը՝

ա) հեղուկ սննդային հավելումների համար՝ ըստ ծավալի կամ քաշի.

բ) պինդ սննդային հավելումների համար, բացառությամբ հաբերի տեսքով

վաճառվող հավելումների՝ ըստ քաշի.

գ) կիսապինդ կամ մածուցիկ սննդային հավելումների համար՝ ըստ քաշի կամ ծավալի.

դ) հաբերի տեսքով վաճառվող սննդային հավելումների համար՝ ըստ քաշի, փաթեթում հաբերի քանակի նշումով։

Հավելված N 2

ՀՀ կառավարության թվականի

-ի N - Ն որոշման

ՑԱՆԿ

ՄԱՆՐԱԾԱԽ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ՍՆՆԴԱՅԻՆ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԻ

Դասիչը	**Սննդային հավելման անվանումը**	**Տեխնոլոգիական նշանակությունը**
E200	Սորբինաթթու	կոնսերվանտ
E201	Նատրիումի սորբատ	կոնսերվանտ
E202	Կալիումի սորբատ	կոնսերվանտ
E203	Կալցիումի սորբատ	կոնսերվանտ
E210	Բենզոաթթու	կոնսերվանտ
E211	Նատրիումի բենզոատ	կոնսերվանտ
E212	Կալիումի բենզոատ	կոնսերվանտ
E213	Կալցիումի բենզոատ	կոնսերվանտ
E260	Քացախաթթվի 9%-ոց (ոչ ավելի) ջրային լուծույթ	կոնսերվանտ, թթվայ կարգավորիչ
E620	Գլուտամինաթթու	համի և բույրի ուժեղ
E621	Նատրիումի գլուտամատ	համի և բույրի ուժեղ
E622	Կալիումի գլուտամատ	համի և բույրի ուժեղ

E626	Գուանիլաթթու	համի և բույրի ուժեղ
E627	Նատրիումի գուանիլատ	համի և բույրի ուժեղ
E628	Կալիումի գուանիլատ	համի և բույրի ուժեղ
E629	Կալցիումի գուանիլատ	համի և բույրի ուժեղ
E630	Ինոզինաթթու	համի և բույրի ուժեղ
E631	Նատրիումի ինոզինատ	համի և բույրի ուժեղ
E632	Կալիումի ինոզինատ	համի և բույրի ուժեղ
E633	Կալցիումի ինոզինատ	համի և բույրի ուժեղ
E634	Կալցիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ	համի և բույրի ուժեղ
E635	Նատրիումի 5'-ռիբոնուկլեոտիդներ	համի և բույրի ուժեղ